

# Կոտայքի մարզպետը Չարենցավան խոշորացված համայնքի վարչական շրջաններում Էր 03.11.2018

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն աշխատանքային այցով եղավ Չարենցավան խոշորացված համայնքի Ֆանտան, Կարենիս, Ալափարս, Բջնի և Արզական վարչական շրջաններում: Մարզպետի աշխատանքային թիմի առաջ խնդիր է դրված՝ լինել մարզի բոլոր համայնքներում, քանի որ սա խնդիրները վեր հանելու ամենաարդյունավետ տարբերակն է համարվում:

Ֆանտան համայնքում անմիջապես սկստելի էր ճանապարհների ոչ բարեկարգ վիճակը, ինչը շտկելու համար Չարենցավան խոշորացված համայնքի ղեկավար Յակոբ Շահգալոյանին հանձնարարվել է հետևել խնդրի կարգավորմանը՝ պատրաստելով նաև վարչական շրջանի ղեկավարին ուղղված գրություն:

Բոլոր համայնքներում, որտեղ կան մանկապարտեզներ, դպրոցներ, կրթամշակութային հաստատություններ ու բուժ. կետեր, մարզպետը ծանոթացել է առկա ռեսուրսներին, հնարավորություններին ու պարզել եղած խնդիրները: Կարենիս համայնքում առկա է մանկապարտեզի խնդիր. համայնքի մոտ 3 տասնյակ նախադպրոցական տարիքի երեխաներ հաճախում են հարակից համայնքների մանկապարտեզներ, ինչը խոչընդոտ է հատկապես ձմռան ամիսներին: Վարչական ղեկավարին մարզպետը հանձնարարել է աշխատանքային կարգով կազմել նախահաշիվ՝ հաջորդ տարի համայնքի տարածքում եղած որևէ շինություն համայնքի կողմից ձեռք բերելու և այն որպես մանկապարտեզ ծառայեցնելու համար:

Բջնիի մշակույթի կենտրոնի շենքը խիստ անմխիթար վիճակում է: Ռոմանոս Պետրոսյանի հանձնարարականով պետք է կատարվեն որոշակի ուսումնասիրություններ՝ հասկանալու այդ շենքի նպատակային օգտագործման հնարավոր այն տարբերակները, որոնք կապահովեն նաև համայնքի համար եկամտի որոշակի աղբյուրներ ու զարգացման հնարավորություններ: Բջնիում առկա են նաև տուրիզմի զարգացման որոշակի ռեսուրսներ, որոնցից է, օրինակ, ամրոցը, որը համայնքի այցեքարտերից է: Այցի շրջանակներում մարզպետը հասցրեց լինել նաև ամրոցում ու դրա տարածքից հավաքված իրերի նորաբաց փոքրիկ ցուցասրահում:

Վարչական շրջանների ղեկավարների ու Չարենցավան խոշորացված համայնքի ղեկավարի կողմից բարձրացված մի շարք խնդիրների մասով տեղում ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր, մյուսները լինելու են մարզային իշխանությունների ուշադրության կենտրոնում՝ առաջին իսկ հնարավորության դեպքում լուծումներ գտնելու համար:

Նախապես ունեցած պայմանավորվածության համաձայն՝ հնարավոր գործընկեր կազմակերպության ներկայացուցչի հետ մարզպետը այցելել է նաև Աբովյան համայնքի հարակից աղբավայր: Քննարկվել են աղբավայրը լիկվիդացնելու և եղած աղբը վերամշակելու հարցերը: Դիտարկվում են ամենաօպտիմալ լուծումները՝ ծխացող աղբավայրերի խնդիրը մեկընդմիջտ լուծելու համար: